

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի <<Կոտայքի Ս.Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ռուսաց լեզու (6 դասաժամ), ֆիզկուլտուրա (21 դասաժամ), տեխնոլոգիա /տղաներ/ (3 դասաժամ), ինֆորմատիկա (9 դասաժամ, որից, 3 դասաժամը՝ թվային գրագիտություն և համակարգչային գիտություն), մայրենի /4-րդ դասարան/ (8 դասաժամ), ֆիզիկա / 8 ժամ/թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին::

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համարել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև 2023 թվականի սեպտեմբերի 13-ից 28-ը ներառյալ**, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի հոկտեմբերի 4-ին, ժամը 14:00-ին**, Կոտայքի մարզի Կոտայքի Ս.Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Ակունք համայնք, գ. Կոտայք, Կենտրոնական փողոց թիվ 4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /055/ 89-98-84 հեռախոսահամարով: